



«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը նախադպրոցական տարիքում:

Դաստիարակ՝ Ալլա Գուլոյան

Մանկապարտեզ՝ «Արմավիր գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1 Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման և զարգացման ծրագրի բովանդակությունը և կառուցվածքը5

1.1 Երկրաչափական ձևերի ուսուցման առանձնահատկությունները մանկապարտեզի տարիքային տարբեր խմբերում.....8

1.2 Մանկական գրականությունը և տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը10

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 2 Տարրական մաթեմատիկական պատկերացումների գծով տարվող պարապմունքների պլանավորումը և հաշվառումը.....15

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....29

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....31

Ներածություն

Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման հիմնական ուղղություններից ելնելով՝ մանկապարտեզում իրականացվող տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքներն իրականացվում են որոշակի համակարգով՝ 5-6 տարեկան երեխաների տարիքային առանձնահատկությունների համապատասխան ուսուցանվող նյութի բովանդակության աստիճանական հաջորդական բարդացման միջոցով: Տարրակ մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները բխում են ավագ խմբի տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման և զարգացման ծրագրային խնդիրների պահանջներից (մինչթվային հասկացությունների ամրապնդում, 10-ի սահմանում քանակական և կարգային համրանք, 10-ի սահմանում թվերի համեմատում և կազմություն, պարզ և կոռահման խնդիրներ, տարածական և ժամանակային պատկերացումներ, երկրաչափական պատկերների մասին նախագիտելիքներ...): Պարապմունքների ձևով իրականացվող ուսուցման ընթացքում երեխաները տիրապետում են ծրագրով նախատեսված որոշակի գիտելիքների և կարողությունների, որոնք չեն կարող յուրացվել ինքնաբուխ խաղերի, մեծերի հետ ամենօրյա հաղորդակցման ինքնուրույն գործունեության միջոցով: Մաթեմատիկական որպես գիտություն բազմաբնույթ ու հետաքրքիր է: Այն ոչ միայն առարկաների, դրանց հարաբերակցության, հատկանիշների, թվերի, երկրաչափական պատկերների և դրանց հետ կապված գործողությունների ուսումնասիրությունն է, այլև՝ միջոց երեխաների աշխարհընկալման համար: Նոր մատուցված գիտելիքները խթանում են երեխայի լեզվամտածողությունը, տրամաբանությունը, ստեղծագործական մտածողությունը: Ուսուցանված նյութը երեխան պետք է ընկալի, վերհիշի և եզրահանգում կատարի: Խնդրահարույց հարցերը երեխային մղում են տրամաբանական գործողությունների՝ համեմատել, դասակարգել, մտածել, ապացույցներ գտնել, ընդհանրացնել, վարկածներ առաջադրել, ինքնուրույն ստուգել և ուղղել: 5-6 տարեկանում երեխայի ԵՄ-ը վերաբժնորվում է: Այս փուլում մտավոր,

սոցիական, հուզական և ֆիզիկական ոլորտները հավասարաչափ չեն զարգանում, որի արդյունքում երեխան բախումներ է ունենում: Կարևոր է շեշտադրել ուժեղ կողմը՝ մյուս ոլորտները զարգացնելով: Եթե երեխան որևէ գործողություն լավ չի կատարում, միշտ կարևոր է հիշեցնել, որ շատ բաներ նրա մոտ լավ են ստացվում: Ավագ նախադպրոցականի իմացական գործընթացների զարգացումը մաթեմատիկական տարրական պատկերացումների ձևավորման պարապմունքների ընթացքում:

ԳԼՈՒԽ 1 Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման և զարգացման ծրագրի բովանդակությունը և կառուցվածքը

Նախադպրոցական կրթադաստիարակչական համալիր ծրագիրն ընդգրկում է 3-6 տարեկան երեխաների համար նախատեսված տարրական մաթեմատիկայի նյութեր, որի նպատակն է երեխաների մեջ հետաքրքրություն առաջացնել շրջապատող առարկաների մեծության, ձևի, քանակական փոփոխությունների, տարածության և ժամանակի մեջ ճիշտ կողմնորոշվելու վերաբերյալ: Յուրաքանչյուր տարիքային խմբում նախատեսված նյութն ուսուցանելու գործում մեծ դեր են կատարում մաթեմատիկայի պարապմունքները: Նախադպրոցականների ուսուցման հիմնական սկզբունքները հանդիսանում են առաջադրվող նյութի մատչելիությունը, դիտողականությունն ու հաջորդականությունը: Գիտելիքների այն ծավալը, որը պետք է յուրացնեն մանկապարտեզի տարիքային տարբեր խմբերի երեխաները որոշվում է յուրաքանչյուր երեխաների զարգացման առանձնահատկություններով: Մաթեմատիկայի ծրագիրը կազմված է 4 բաժնից: Հաշիվ:

Մեծություն:

Ձև:

Կողմնորոշում տարածության և ժամանակի մեջ:

Մաթեմատիկայի պարապմունքները որպես տարրական մաթեմատիկական պատկերացումներ ձևավորման և զարգացման հիմնական ձև: Մաթեմատիկայի ուսուցումը մանկապարտեզում երեխաների իմացական ընդունակությունների սխտեմատիկ, մտավոր զարգացմանը նպաստող գործընթաց է, որի ժամանակ երեխաներին հաղորդվում է գիտելիքների համակարգ: Նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցումը տարբերվում է դպրոցում անցկացվող ուսուցումից: Մանկապարտեզում հաղորդվում են ծավալով փոքր և տարրական գիտելիքներ: Ի տարբերություն դպրոցի, չեն ստանում տնային առաջադրան, գրավոր աշխատանքներ չեն տարվում, գնահատականներ չեն նշանակում: Այլ են մեթոդները՝ ավելի շատ զննական, խաղային հնարներ, դաստիարակը

պարապմունքը կազմակերպում է ելնելով երեխայի տարիքին և անհատական առանձնահատկություններից: Մաթեմատիկայի յուրաքանչյուր պարապմունքի ժամանակ դաստիարակը օգտագործում է գանազան մեթոդներ. բառային մեթոդներ (բացատրում, պատմում, հարցերի սիստեմ), դիտողական մեթոդներ (առարկայի, նկարի ցուցադրում, երկրաչափական ձևերի ցուցադրում), պրակտիկ մեթոդներ (աշխատանք անհատակ նյութերով, արդյունավետ գործունեություն՝ նկարչություն, ապլիկացիա), խաղային մեթոդներ (խաղային իրավիճակի ստեղծում, մրցակցական խաղեր, դիդակտիկ խաղեր):

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման և զարգացման միջոցները մանկապարտեզում.

Մաթեմատիկայի պարապմունքներ, դիդակտիկ և զարգացնող խաղեր, մանկապարտեզում անցկացվող բոլոր պարապմունքները՝ մայրենի լեզվի, երաժշտության, նկարչության, ֆիզկուլտուրայի, զբոսանքները, մանկական գրականությունը:

Դիդակտիկ նյութերի օգտագործումը և դրանց ներկայացվող պահանջները

Մաթեմատիկայի պարապմունքներին դիդակտիկ նյութերով հաշիվ սովորեցնելը ուսուցման յուրատեսակ ձև է: Հայտնի է, որ մանկապարտեզում դիդակտիկ նյութերը հանդիսանում են միջոց այդ տարիքի երեխաների ուշադրությունը գրավելու և հաշիվ սովորեցնելու համար: Դիդակտիկ նյութերի օգնությամբ երեխաները լավ հասկանում են ուսուցվող նյութը, դառնում են հանգիստ ու հավասարակշռված, նախապատրաստվում դպրոցական ուսուցմանը: Դիդակտիկ նյութերը պետք է լինեն հետաքրքիր, հաճելի և մաքուր: Միաժամանակ պետք է նշել, որ դրանք իրենց կառուցվածքով չպետք է շատ գրավիչ լինեն, որովհետև իրենց վրա կրկնեն երեխաների ուշադրությունը և թույլ չեն տա ըմբռնելու ուսուցվող նյութը: Պետք է հիշել, որ չի կարելի միշտ միևնույն դիդակտիկ նյութերը օգտագործել, որովհետև դա իջեցնում է երեխաների հետաքրքրությունը դեպի

ուսուցվող նյութը: Բացի այդ, երեխան թիվը միշտ կապում է միայն տվյալ առարկայի հետ և կարծում է թե առարկան փոխվելիս, կարող է փոխվել նաև հաշիվը և հետևապես, ընդհանրացում չի կարողանում կատարել: Մաթեմատիկայի յուրաքանչյուր պարասումնք պետք է հագեցված լինի դիդակտիկ պարագաներով՝ հաշվիչ փայտիկներ, խորանարդիկներ, օղակներ, գավաթներ, ափսեներ, դրոշակներ և այլն:

Մինչթվային հասկացությունների ձևավորումն ու գրառումը

Մինչև թվի հետ ծանոթացնելը պետք է երեխաների հետ որոշակի աշխատանքներ տանել՝ նրանց ծանոթացնելու մինչթվային հասկացություններին, դրանց անվանում են նաև նախնական հասկացություններ: Այս հասկացություններն էլ բաժանվում են մեծության (մեծ-փոքր, հաստ-բարակ, կարճ-երկար, լայն-նեղ և այլն) և տարածական (վերև-ներքև, հեռու-մոտ, առջև-հետև): Նույնիսկ 3 տարեկան երեխաները ընկալում են առարկաների մեծությունը, սակայն այդ ընկալումը դեռևս տարբերակված չէ, նրանք միայն ընդհանու են տեսնում: Հաստ, երկար, լայն բառերի փոխարեն օգտագործում են՝ մեծ բառը, իսկ նեղ, բարակ, կարճ, համեմատել տարբեր չափսերի երկու կոնկրետ առարկաներ, որպեսզի ակնառու լինի դրանց տարբերությունը: Այս հասկացությունները կարելի է սովորեցնել զբոսանքների, դիտումների, խաղերի և մանկական գրականությունը: Այս հասկացությունները կարելի է սովորեցնել զբոսանքների, խաղերի և մանկական գրականության ընթերցանության ժամանակ:

Քանակային պատկերացումների ձևավորումը և զարգացումը

Հաշվի ուսուցումը պետք է կառուցվի այնպես, որպեսզի երեխաները ըմբռնեն, թե ինչպես է ձևավորվում յուրաքանչյուր հաջորդ թիվ, այսինքն՝ թվերի բնական շարք կազմելու ընդհանուր սկզբունքը: Հաշվի ուսուցումը պետք է օգնի երեխաներին հասկանալու տվյալ

գործունեության նպատակը (միայն առարկաները հաշվելով կարելի է ճիշտ պատասխանել «որքան» հարցին): Հաշվելու հմտությունների ամրապնդումը պահանջում է վարժությունների լուծում (բոլոր պարապմունքների ժամանակ): Քանակային պատկերացումների ձևավորման համար շատ կարևոր է ուղիղ և հետ համրանք կատարելը, որպեսզի ուղիղ և հետ համրանքը չկրի մեխանիկական բնույթ, երեխաներին առաջարկել նաև հաշվել որոշակի երկու թվերի սահմանում. օրինակ՝ 2-8, 4-7, 6-9, 10-7, 8-2, 9-5 և այլն: Ավագ խմբում ծրագրով նախատեսվում է սովորեցնել նաև կարգային համրանք: Տարբեր առաջադրանքների միջոցով երեխան պետք է իմանա, որ յուրաքանչյուր կարգային թվին համապատասխանում է միայն մեկ առարկա, որը ցույց է տալիս տվյալ առարկաների խմբում նրա տեղը: Դրա համար պետք է տալ այսպիսի առաջադրանքներ.

- Հաշվել ձախից 5 խորանարդ այնպես, որ հինգերերորդ լինի կարմիր գույնի:
- Հավաքապաստառեռի վրա դնել 3 ծաղիկ (ձախից հաշված) այնպես, երրորդը լինի վարդ:

1.1 Երկրաչափական ձևերի ուսուցման առանձնահատկությունները մանկապարտեզի տարիքային տարբեր խմբերում

Նախադպրոցական կյանքական համալիր ծրագիրը միջին խմբից սկսած նախատեսվում է երեխաներին ծանոթացնել երկրաչափական պարզ ձևերին՝ շրջան, գունդ, եռանկյուն: Այստեղ նպատակն այն է, որ երեխան պիտի միայն ճանաչի, տարբերի և անվանի: Ավագ խմբում արդեն երեխաները ոչ միայն պետք է ճանաչեն, տարբերեն և անվանեն երկրաչափական ձևերը, այլև իմանան դրանց բնորոշ տարրերը, կարողանան համեմատել միմյանց հետ, գտնել տարբերությունները և նմանությունները: Դպրոցին նախապատրաստվող խմբում երեխաներին պետք է սովորեցնել շրջապատող առարկաները տեսնել որպես երկրաչափական ձևեր: Օրինակ՝ փսեսն, ձայնապնակը, կոճակը նման են շրջանի, տանիքը, գլխաշորը՝ եռանկյանը, անձեռոցիկը, թաշկինակը՝

քառակուսուն, կաղամբը, ձմերուկը, նարինջը, բայը նման են գնդին: Մարդը իր կենցաղում ավելի շատ օգտագործում է ուղղանկյունաձև առարկաներ՝ սավան, գորգ, դուռ, լուսամուտ, վերմակ, գրատախտակ և այլն:

Դիդակտիկ խաղերի դերը տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման գործում

Նախադպրոցական տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման գործում առանձնահատուկ նշանակություն ունեն դիդակտիկ խաղերը, որոնք բնորոշ առանձնահատկությունը խաղի և ուսուցման տարրերի կապն է, դրանց նպատակն է սովորեցնել երեխաներին ինչ-որ բան: Դիդակտիկ խաղը որպես ուսուցանող խաղ ունի երկակի բնույթ. Գործունեության խաղային և դիդակտիկ ուղվածություն: Մաթեմատիկական բովանդակությամբ յուրաքանչյուր դիդակտիկ խաղ ունի իր խնդիրը՝ զարգացնել բանավոր համբանք կատարելու ունակությունը, ծանոթացնելու թվերի բնական շարքին, ծանոթացնել թվանշաններին, թվերի կազմությանը, երկրաչափական պարզ ձևերին: Յուրաքանչյուր տարիքային խմբի համար դասադասված են խաղեր՝ հաշվի առնելով ծրագրի խնդիրները: Այդ խաղերի համար պետք է ունենալ գրավիչ ու հետաքրքիր դիդակտիկ նյութեր ու պարագաներ: Միննույն խաղը կարելի է անցկացնել տարբեր խմբերում՝ խաղի մեջ ներդնելով ներ ու համեմատաբար բարդ պահանջներ (Գտիր քո ստունը, Շարունակիր հաշվել, Դասավորի ճիշտ, Որ ձևը չկա) և այլն:

Պարզ խնդիրների ուսուցումը մանկապարտեզում

Մանկապարտեզում սովորաբար լուծում են մեկից որ ավելի թվաբանական գործողությամբ լուծվող խնդիրներ, որոնք ընդունված են անվանել պարզ խնդիրներ: Բերենք մի պարզ խնդիր՝ օրինակ «Լուսինեն պլաստիլինից ծեփեց 2 խնձոր և 1 տանձ: Ընդամենը քանի միրգ ծեփեց Լուսինեն»: Դաստիարակը պետք է ասի, որ այս խնդրից

հայտնի է, որ Լուսինեն ծեփել է 2 խնձոր և 1 տանձ և այդ հայտնի թվերը կոչվում են հայտնի տվյալներ: Պետք է հարցնել՝ ինչը հայտնի չէ, ինչը պետք է գտնել, դա էլ խնդրի հարցն է: Երեխաների ստուգելու նպատակով կարելի տալ պակաս տվյալներով խնդիրներ և ստուգել երեխաներին: Անահիտը ծեփել է սկյուռիկներ և նապաստակներ: Ընդամենը քանի կենդանի էր ծեփել:

Ակվարիումի մեջ կար 5 մեծ և փոքր ձկնիկ, Նունեն փոքրիկ ձկներին տեղափոխեց մի այլ ակվարիում: Քանի մեծ ձուկ մնաց ակվարիումի մեջ: Դպրոցին նախապատրաստվող խմբի երեխաները ոչ միայն պետք է կարողանան լուծել պարզ խնդիրներ, այլև կարողանան ինքնուրույն կազմել պարզ խնդիրներ: Առաջարկում ենք հետևյալ եղանակներով: Տրված որոշակի քանակի առարկաներով (3 կարմիր խորանարդ և 2 կապույտ խորանարդ): Նկարներով (ծաղկաման՝ մեջը 5 կարմիր մեխակ և 2 սպիտակ մեխակ): Տրված լուծումով (6-ը պետք ավելացնել 1-ով): Տրված թվի սահմանում (8-ի սահմանում):

1.2 Մանկական գրականությունը և տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը

Բոլորին հայտնի է, որ երեխաները շատ են սիրում, երբ մեծերն իրենց համար կարդում են մանկական ստեղծագործություններ: Հենց այդ ստեղծագործություններից շատերն էլ կարելի է օգտագործել որպես տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման և ամրապնդման միջոց: Հայ մանկագիրներից շատերն իրենց ամբողջ գրական վաստակը նվիրել են երեխաների: Այդ ստեղծագործությունից զգացվում է, որ նրանք ուսումնասիրել, ճանաչել են մանկան հոգին, նրանց կյանքը, խաղն ու աշխատանքը: Բերենք այդպիսի ստեղծագործություններից մի քանիսը:

Լալան ունի երկու տոտի,

Մեկ, երկու:

Հարկավոր է երկու կոշիկ՝

Մեկ, երկու:

Քուչին ունի չորսը տոտիկ,

Մեկ, երկու, երեք, չորս:

Հարկավոր է չորսը կոշիկ՝

Մեկ, երկու, երեք, չորս:

*Մայրիկ, նայիր ես այսօր
Նկարել եմ մի խնձոր,
Ներկել կարմիր ու դեղին,
Երկու տերև էլ ծայրին:*

Դաստիարակը պետք է հարցեր տա վերոհիշյալ ստեղծագործությունները կարդալուց հետո:

Քանի՞ տոտիկունի Լալան:

Քանի՞ տոտիկ ունի քուչին:

Ու՞մ ոտքերն են շատ:

Ու՞մ է հարկավոր շատ կոշիկ՝ Լալային, թե քուչիկի:

Կարելիք է նույնիսկ օգտագործել հայկական ժողովրդական բանահյուսության որոշ ժանրեր, իհարկե ընտրելով նախադարձական ավագ տարիքի համար մատչելի օրինակներ (հանելուկ, շուտասելուկ, առած, ասացվածք): Բերենք մի քանի օրինակ.

Տասը հագուստ ունի,

Կար չկար մի գաճաճ արջ կար,

Եվ ոչ մեկը կոճակ չունի:

Այդ գաճաճ արջի աջ աչքը չկար:

Տասը լսիր, մեկը խոսիր:

**Ոչ ստանդարտ խնդիրները որպես ավագ նախադարձականների մտածողության
զարգացման միջոց**

Նախադարձական կրթադաստիարակչական համալիր ծրագրի մաթեմատիկայի բաժինը մանկապարտեզի ավագ խմբի երեխաներին առաջարկում է լուծել ոչ միայն պարզ

խնդիրներ, այլև կարողանալ լուծել նաև ոչ ստանդարտ տիպի խնդիրներ, որոնք ընդունված են անվանել կռահման խնդիրներ:

Հոգեբանները գտնում են, որ երեխաներին առաջադրվող խնդիրները պետք է ունենան տվյալ տարիքի համար որոշակի դժվարություններ: Միայն դրանց հաղթահարման գործընթացում նա կկարողանա զարգացնել իր մտավոր ընդունակությունները, որովհետև երբ երեխան հանդիպում է իր համար մատչելի դժվարությունների, նա ակտիվացնում է իր մտածողությունը, դրանով իսկ ինքնուրույնաբար ինչ-որ անհայտ բան է «հայտնագործում»:

Ելնելով ծրագրից մենք հավաքել,մշակել և ստեղծել ենք մի շարք կռահման խնդիրներ, որոնք դասդասել ենք.

- ✓ Միայն կռահունակություն պահանջող խնդիրներ:
- ✓ Համրանք կատարելու վերաբերյալ խնդիրներ:
- ✓ Մեծության մասին խնդիրներ:
- ✓ Երկրաչափական ձևերի վերաբերյալ խնդիրներ:
- ✓ Տարածության և ժամանակի մեջ կողմնորոշվելու խնդիրներ:

Բերենք մի քանի օրինակներ.

Երկու խոզ ունեն հավասար թվով խոճկորներ:Նրանցից մեկը ունի 5 խոճկոր: Քանի՞ խոճկոր ունի մյուսը:

Խանութ բերեցին և բիտոն կաթ: 2 բիտոն կաթը վաճառեցին: Քանի՞ բիտոն մնաց խանութում:

Ափսեի մեջ կար 3 գաթա: Երեք երեխայի տվեցին մեկական գաթա մեկը մնաց ափսեի մեջ: Ինչպե՞ս դա կարող էր պատահել:

Մեկ փայտիկը ունի 2 ծայր, 2 փայտիկը՝ 4: Քանի՞ ծայր կունենա 2 և կես փայտիկը:

Ինչպե՞ս կարելի է 5 փայտիկով կառուցել երկու եռանկյուն:

Կառքին լծված 3 ձի ճանապարհին եղան 3 ժամ: Յուրաքանչյուր ձի քանի՞ ժամ եղավ ճանապարհին:

Զարգացնող խաղերը տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման համակարգում:

Նախադպրոցական տարիքում երեխայի հիմնական գործունեությունը խաղն է, այդ տեսակետից զարգացնող խաղերը կարող են նպաստել նրանց մաթեմատիկական պատկերացումների զարգացմանը: Ավելի հաջողված խաղերից են «Թխվածոներ», «Ո՞ր ձևն է ավելորդ», «Որտե՞ղ պետք է դնել քարտը» և այլն:

Ժամանակի ընկալման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Ժամանակը հանդիսանում է նյութի գոյության համընդահանուրձև: Ժամանակը չունի տեսանելի ձև և չի ենթարկվում զգայական զննման, այդ պատճառով էլ այն ընկալվում է միջնորդված ձևով: Երեխաների համար դժվար է նույնիսկ որոշ բառերի հասկանալը, որը արտահայտում է ժամանակի հարաբերությունները:

Ինչ է նշանակում հիմա, վաղը, այսօր բառերը, օգտագործման պահին նույնիսկ այդ բառերն արտահայտող ժամանակային հասկացությունները շարժվում են, առաջ են գնում: Այդ հանգամանքն էլ դժվարացնում է երեխաներին ճիշտ ըմբռնելու ժամանակը և հաճախ հարցնում են մեծերից:

Հիմա արդեն վաղն է:

Դեռ այսօր է:

Վաղը եկավ արդեն:

Ժամանակի ըմբռնման համար մեծ դեր են խաղում կյանքի ռիթմիկ պրոցեսները, երեխան դեռ վաղ տարիքից զգում է, որ որոշ երևույթներ կրկնվում են՝ ուտելը, քնելը, զբոսնելը, դրա հետ կապված երեխայի մոտ առաջանում են պայմանական ռեֆլեքսներ: Ժամանակի մեջ ճիշտ կողմնորոշվելու համար մեծ նշանակություն ունի յուրաքանչյուր տարիքային խմբերի համար ճիշտ ռեժիմը: Ծրագրով տրված է, թե յուրաքանչյուր տարիքային խմբում ինչ պետք է իմանա երեխան:

Գլուխ 2. Տարրական մաթեմատիկական պատկերացումների գծով տարվող պարապմունքների պլանավորումը և հաշվառումը

Մաթեմատիկական պատկերացումների ձևավորման և զարգացման խնդիրները չեն կարող լուծվել առանց ճիշտ պլանավորման և հաշվառման:

Պլանավորումը նախադպրոցական տարիքի երեխաների տարրական մաթեմատիկական պատկերացումների գծով տարվող աշխատանքների ղեկավարման միջոցներից մեկն է: Պլանավորումը հնարավորություն է տալիս նպատակաուղղված և սիստեմիկ բաշխել ծրագրային նյութը ուսումնական ժամանակի վրա:

Պլան գրելուց առաջ դաստիարակը պետք է իմանա.

- ✓ Տարրական մաթեմատիկայի ամբողջ ծրագիրը և տվյալ տարիքային խմբի ծրագիրը:
- ✓ Իր խմբի երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները:
- ✓ Ուսուցման ժամանակ կիրարկող դիդակտիկ սկզբունքները:

Դաստիարակը պետք է մշտապես բարձրացնի իր մասնագիտական որոակավորումը, տեղյակ լինի ժամանակակից մանկավարժական գիտության նվաճումներին և գործնական աշխատանքի նորություններին:

Հաշվառումը մանկավարժի խորը բազմակողմանի՝ կոնկրետ աշխատանքի արդյունքի վերլուծությունն է, մասնավորապես, մաթեմատիկայի պարապմունքի վերլուծությունը: Այն հնարավորություն է տալիս գնահատելու ուսուցման ընթացքում օգտագործած մեթոդների, դիդակտիկ խաղերի, դիտողական պարագաների էֆեկտիվությունը և հետագա աշխատանքների պլանավորումը: Պլանավորումը և հաշվառումը փոխադարձ կապի մեջ են: Քանի որ ծրագրում մաթեմատիկան տրվում է տարեկան կտրվածքով,

ցանկալի է ուսումնադաստիարակչական աշխատանքները պլանավորել շաբաթ առ շաբաթ:

Նոր տեխնոլոգիաների ներդրումն ու հնարների կիրառումը երեխան կրթության համակարգում

Հենվելով ավանդական մեթոդների վրա՝ պարապմունքների կառուցվածքային մասերում մշակվում են տարբեր խաղային ձևեր, ընդգրկվում և կիրառվում են գրավիչ նյութեր՝ դիդակտիկ և սյուժետային խաղեր, տարբեր բնույթի թատերականացված պահեր, խնդիրներ ոտանավորի ձևով, խնդիր-հանելուկներ, խնդիր-հեքիաթներ, կատակներ: Դաստիարակը ինքն է որոշում, թե խաղային ձևերից որը կարող է իրականացնել պարապմունքի ընթացքում, որը՝ ամենօրյա կյանքում: Կարևորը երեխաների ձեռք բերած գիտելիքների վերջնական արդյունքն է: Հիմնականում ստեղծագործական որոնման երեք ուղղություն կա:

1. Առաջինը հնարների, եղանակների մշակումն է, որն ապահովում է պարապմունքի կառուցվածքային մասերում խաղային շարժառիթների ստեղծումը, քանզի գործունեության շարժառիթը խախտվելու ժամանակ երեխան կորցնում է հետաքրքրությունը նյութի նկատմամբ:

Այսպես. Նապաստակը տնակ չունի, օգնենք պատրաստել, թզուկը մոլորվել է, նշանների միջոցով օգնենք գտնել նրա տունը: Դուք աճպարարներ եք, փորձեք տարբեր նյութերի միջոցով աճպարարություն անել (մագնիսի, ջրի մեջ հալվող և չհալվող, սուզվող և չսուզվող առարկաների, օդը կշռելու և այլն): Կատուն թրջվել է անձրևի տակ և խնդրում է, որ իր համար գորգ նկարենք: Ճուտիկները խոտ են ուզում, նկարենք այն: Այլմոլորակայինները հյուր են կանչում իրենց հանձնարարությունները կատարողներին: Օգնենք շնիկին գտնել ընկերոջը մաթեմատիկական քաղաքում:Իսկ քաղաքի դռները

բացվելու համար պետք է հանձնարարություն կատարել՝ ծափ տալ երեք անգամ ավելի շատ, քան դեղին շրջանիկներն են:

2. Հաշվի առնելով երեխաների մտավոր զարգացման անհամաչափությունը՝ դաստիարակի ստեղծագործական միտքը պետք է ուղղված լինի երեխայի մտավոր կարողությունների զարգացմանն ու հմտությունների ձևավորմանը: Վերջինս թելադրում է նաև տարբերակված մոտեցում ցուցաբերել երեխաների ունակությունների և նախասիրությունների նկատմամբ:
3. Ստեղծագործական որոնման մյուս ուղղության մեջ ընդգրկված են երեխաների կյանքի կազմակերպման եղանակները, որոնց դեպքում առավելագույն արդյունք է ապահովում մանկավարժի ներգործությունը: Կենդանի հաղորդակցում, ուրախություն, նախասիրությունների արտահայտում և գնահատում:

Ուսումնական հանձնարարությունները պետք է հիմնավորվեն ու պատճառաբանվեն:

Անհրաժեշտ է ոչ թե վերապատմել բոլորին հայտնի հեքիաթը, այլ բեմականացնել այն: Պետք է ոչ թե նկարագրել առարկան, որը բոլորը տեսնում են, այլ նկարագրելով հանելուկ գուշակել, կամ պատրաստի օրինակի հիման վրա պատմություն ստեղծելու փոխարեն՝ տպավորություններ փոխանակել անձնական փորձից, մասնակից դառնալ երկխոսությանը, այլ ոչ թե ստիպել երեխային կրկնել ամբողջ նախադասությունը: Երեխաները պատասխանի ընթացքում պետք է զգան այդ պահին իրենց տեսածը: Պետք չէ երեխային ստիպել լրիվ պատասխան տալ: Բավական է միայն, որ նա կարողանա արտահայտվել: Եվ մտապահելը, և հորինելը և պատմելն ունեն իրենց ալգորիթմը (Խնդիրների լուծման եղանակը): Հիշելու, երևակայելու, հորինելու պարզ եղանակները սովորեցնելն օգնում է պարզ աստիճանից դուրս գալ ստեղծագործական բուռն աշխատանքի:

«Պատմիր առարկայի մասին»:

Պատկերացրու և նկարագիր առարկան, օբյեկտը: Հիմնականում ասացինք, թե ինչի համար է առարկան, նրա ձևը, գույնը, հոտը:Իսկ այժմ դուք նոր բան մտածեք: Ձեր առջև առարկա է:

Նրա կազմությունը, կառուցվածքը:

Չափը, ձևը, գույնը, նյութը. Ինչ հետևություն կարելի է անել դրանից:

Առարկաների նշանակությունը. Ինչի է ծառայում առարկան (զբաղեցնում է զվարճացնում է և այլն: Օրինակ մկրատ – կտրում է, ակնոց – տեսողությունն է ուղղում, սանր մազերն է հարդարում և այլն):

Առարկաները համեմատել ըստ հատկանիշի:

-Գուշակել մնջախաղի միջոցով և կարողանալ կարդալ այն:

«Նկատել հանելուկը»:Ստեղծել նկարած հանելուկների «բանկ», ցույց տալ երեխային

Գուշակելու համար:

- Տրված առարկաներով կազմել հանելուկ(ասեղ,սանր,մկրատ):

Գտնել ավելորդ հանելուկը:Ավելորդ համարել երեքից մեկը(2-ը ծաղիկների մասին են, 1-ը՝ թռչնի, որն էլ ավելորդ է):

«Գտնել զույգ հանելուկը»: Հանելուկներից գտնել այն զույգերը, որոնք մտքով իրար մոտ են (նապաստակներ, ոգնիներ):

Մաթեմատիկա

Նախադպրոցական կրթության հումանիզացումը

Ծրագրի մշակման հիմքում ընկած է նախադպրոցականի պատկերավոր մտածողության և երևակայության զարգացումը: Ծրագրային խնդիրները ձևակերպված են ոչ թե որպես «ուսուցանել պարապմունքներին», այլ «սովորեցնել» երեխաներին:

Վերջնական արդյունքը լինելու է «երեխաները պետք է կարողանան»: Այդպիսի կրթությունը միանշանակորեն հանգեցնում է ունակությունների ձևավորումանը:

Իսկ այժմ նպատակները լրացվում և ձևավորվում են հետևյալ կերպ.

- Զարգացնել ստեղծագործական մտածողության արդյունավետ նախադրյալները՝ կերպարային, երևակայական, վերացական,
- ձևավորել դրական վերաբերմունք և հետաքրքրություն մաթեմատիկայի նկատմամբ,
- դաստիարակել նպատակադրում զարգացնել մտավոր ընդունակություններ և ձեռներեցություն,
- պայմաններ ստեղծել նախասիրությունների և անհատական ընդունակությունների զարգացման համար,
- նախապատրաստել դպրոցին:

Պատկերացումներ ձևավորելու հետ մեկտեղ կիրառել հետևյալ ձևերը

- ծանոթացում ամենօրյա կենցաղային իրավիճակների հետ
- ցուցադրական փորձերի կիրառում, թատերականացում,
- մաթեմատիկական բովանդակությամբ նյութի կրկնությամբ կամ բացատրությամբ միջին և ավագ խմբերում կոլեկտիվ պարապմունքներ ազատ մասնակցություն ունենալու պայմանով
- միջին, ավագ խմբեր ֆրոնտալ պարապմունք խիստ կանոններով, բոլորի համար պարտադիր,
- շարունակական պարապմունք նախապատրաստական խմբում երեխաների հետ պայմանավորվելուց հետո ազատ զրույցներ մաթեմատիկայի կամ հումանիտար գիտությունների վերաբերյալ, նրանց կապը գործունեության մյուս ճյուղերի՝

արվեստի, երաժշտության, դեկորատիվ կիրառական արվեստի, դիզայնի հետ, ինքնուրույն գործունեություն զարգացող միջավայրում:

Մաթեմատիկայի պարապմունքն անցնել որպես առանձին առարկա, քանի որ երեխաները սկսում են այն հասկանալ ավագ խմբից: Մինչ այդ, այն ընկալվում է որպես կենցաղի բնական մաս, որի մասին մանկավարժը պատմում է, իսկ նրանք ծեփում և նկարում են:

Ընթացքում ստեղծվում են մաթեմատիկական բնութագրող անհատական և կոլեկտիվ ստեղծագործական աշխատանքներ: Դրանք կարող են տարբերվել իրարից, քանի որ առկա է բնավորության հատկանիշների, հետաքրքրությունների շրջանակի, զգացմունքների տարբերություն:

«Տրամաբանական մտածողության զարգացում մաթեմատիկայի ուսուցում»

Ի տարբերություն ավանդական ծրագրի՝ այստեղ առաջարկում է երեխաների ուշադրությունը կենտրոնացնել այնպիսի առարկաների վրա, որոնք որոշակի քնակով են հանդես գալիս: Օրինակ՝ մեկ թվի հետ կապված են պատկերացումներ, որոնք բնության մեջ հանդիպում են միայն եզակի թվով արև, լուսին երկրագունդ երկու թվով՝ զույգ թվով առարկաներ, երևույթներ աչքեր, գուլպաներ, ձեռքեր, ոտքեր, ակնոց ծաղկի թերթիկների քանակը հինգ կամ վեց թիվը:

Շատ կարևոր է, որ երեխաների գիտակցության մեջ ամեն թիվ կապվի հետաքրքիր և վառ պատկերների ու կերպարների հետ: Ամեն թվի հետ կապված՝ անհրաժեշտ է մի քանի պարապմունք անցկացնել: Հինգ տարեկան երեխաների հետ աշխատելիս՝ հիմնական արդյունավետ մեթոդը բոլոր առարկաները շնչավորելն է: Անհրաժեշտ է կենդանի շունչ հաղորդել այն ամենին, ինչի մասին խոսում ենք երեխաների հետ: Տվյալ դեպքում թվերը պատմական կերպարներ են դառնում: Նրանց մասին կարելի է առասպելներ պատմել: Կենտ թվերը տղամարդիկ է են, զույգերը կանայք: Նրանք օժտված են տարբեր բնավորություններով: Այս աշխատանքն իր մեջ ընդգրկվում է տոնական արարողության համեմված փոքրիկ բեմականացմամբ: Թատրոնի հետևամասում և մասում և վարագույրի վրա փակցվում են համապատասխան նկարներ և առարկաներ: Այնտեղից հայտնվում են

թվային կերպարները, պատմում <<իրենց>> մասին: Նրանք թեմայի վերաբերյալ կարող են իրենց հետ զարգացնող գրքեր, տեսաֆիլմեր բերել: Ցանկալի է այս ամենն իրականացնել երաժշտության հնչյունների ներքո: Յուրաքանչյուր թվին ծանոթանալուց հետո երեխաները ստեղծում են պարապմունքին համապատասխան կոլաժ, ծեփում կամ նկարագարում:

Խնդիրներ

- Իմանալ թվերի բնական շարքը որպես անփոփոխ թվերի մի սիստեմ առաջին տասնյակ/ ճանաչել թվանշանները, ճիշտ անվանել և կարողանալ նկարել (չգծված թերթի վրա ճանաչելը):
- Տարբերել և անվանել երկրաչափական ձևերը/շրջան, եռանկյունի, քառակուսի, հնգանկյուն, վեցանկյուն/:

Վարժեցնել՝ գտնելու յուրաքանչյուր թվին նախորդող և հաջորդող թիվը:

Թեմա<<Թիվ 1, գունդ, շրջան, ճառագայթ>>

Երեխաներն առաջին անգամ հանդիպում են մաթեմատիկական թատրոնին, որի վարագույրներին ամրացվում են նկարներ՝ արևի, երկրագնդի, շրջանի Թատրոնի կողքին դրվում է գլոբուսը, ծաղիկների լուսանկարներ(խատուտիկ, արևածաղիկ, աստղածաղիկ), Որոնք ունեն կենտրոնասամիետրիկ կառուցվածք:

Երաժշտության ներքո բացվում է թատրոնի վարագույրը:

- Մեր խմբում հայտնվել է մի հրաշալի արկղիկ, եկեք վարագույրը բացենք և տեսնենք, թե ներսում ինչ կա:

ՄԵԿ ԹԻՎ.

- Բարև ձեզ, սիրելի երեխաներ: ՈՒրախ եմ ձեզ տեսնելու: Իմ անունը ՄԵԿ է: Ես «Մաթեմատիկա» երկրի թագավորն եմ, մնացած թվերի հետ մենք կարող ենք գալ ձեզ մոտ և պատմել այդ հրաշալի երկրի մասին:

Այստեղ է Արամիկը, նա միակն է: Ահա և Տաթևիկը՝ նա էլ է միակը և ձեզանից յուրաքանչյուրը միակն է աշխարհում :Բոլորդ ունեք մեկ գլուխ, մեկ սիրտ: Մենք ապրում ենք միևնույն Երկիր մոլորակի վրա:Եթե դիտենք տիեզերքից,այն մի մեծ երկնագույն գունդ Մեզ բոլորիս ջերմացնում է մեկ... (արևը): Այն շատ մեծ է և տաք:ՄԻ մեծ հրագունդ է: Երբ դուք արև եք նկարում,դուք նույնպես շրջան եք նկարում:Մեր նախնիները հավատում էին, որ արևի պատկերը պաշտպանում և ուժ է տալիս մարդկանց:Արևը պատկերում էին հագուստներին, թագավորական վզնոցներին:

Հանձնարարության՝ նկարել արև:

ԾԱՂԻԿ (ներկայանում է թատրոնի բեմահարթակին).

- Ես միշտ արթնանում եմ, երբ դուքս է գալիս արևը և իմ թերթիկներով ձգվում եմ նրան ընդատաջ:

ՄԵԿ.

- Երեխաներ, իսկ ի՞նչ դեր ունի արևը ձեր կյանքում: Ինչ կապ ունեն նրա հետ տաքությունը և ցուրտը.: բույսերի ծաղկումը և որամաղրությունը: Ո՞ր կենդան պտուղների ի հասունացումը, ձեր տաքանալ ալ արևի տակ: Դուք գիտե՞ք արևի կողմը, կամ բացվում են են սիրում է ծաղիկներ, որոնք նք իրենց գլուխները այնպիսի ծ միայն այն ժամանակ,երբ արևը շողում է քում են է, իսկ երբ իրենց <<դեմքը>>: Հենց նրանք էլ ոսկյա «գլխիկներ»- օրը մռայլ է, բոլորովին ցույց չեն տալիս լիսիկներ ունեն, ոնց որ փոքրիկ արևիկներ, ճանաչեցիք(Ցույց տալ արևածաղկի և խատուտիկի նկարներ): Համեմատեք արևի և խատուտիկի նկարները:Արևի ամեն մի ճառագայթը սկսվում է շրջանի կենտրոնից և տարածվում է բոլոր կողմերի վրա: Իսկ սկ խատուտիկի՞ թերթիկները: Նրանք նույնպես կենտրոնից, արևի ճառագայթների նման տարածվում են բոլոր կողմերի վրա:

Երեխաներ, նկարեք խնդրում եմ այդ հրաշալի ծաղկի և արևի ուրախ հանդիպումը:

Միրելի երեխաներ, ժամանակն է հրաժե՛շտ տալ ձեզ: Ես թողնում եմ ձեզ մի անակնկալ, դուք մի մոռացեք իմ խնդրանքը:

Դաստիարակ.

- Մեղանի վրա ձեզ սպասում եմ մատիտները և գունավոր կավիճները: Թագավորի համար նկարեք արև և ծաղիկ (հանձնարարությանը հատկացվում է 10 րոպե՝ ներառյալ անհատական գրույցներ նկարածի մասին):

Իսկ այժմ՝ անակնկալը (բացվում է կլոր թխվածքը՝ կենտրոնում մի մեծ մում): Թագավորը մեզ հյուրասիրում է, եկեք թեյ խմենք և թխվածք ուտենք:

Ավագ Խումբ

Նպատակահարմար է առաջարկված նյութն ընդգրկել պարապմունքի որևէ մասի մեջ:

Սեպտեմբեր. նյութի կրկնություն:

Աշխատանքն անցկացվում է զբոսանքի ժամանակ.

Հոկտեմբեր

Թեմա <<Շատ և քիչ, հավասար և անհավասար >>

Պարապմունք 1

«Մեծ, ավելի մեծ, ամենամեծ: Փոքր, ավելի փոքր, ամենափոքր»

Երեխաներին առարկաների համեմատումը սկսել ուսուցանել ամենապարզից՝ չափից, սովորեցնել ինքնուրույն կիրառել ածականների համեմատական և գերադրական աստիճանները:

Պարապմունք 2

Թվերի համեմատում չի տրվում: Այս թեման անհրաժեշտ է ուսումնասիրել դպրոցի նախապատրաստական խմբում՝ թվային գծի հիման վրա: Տվյալ պարապմունքին

նպատակահարմար է անցակցնել պարապմունք չափի մասին՝ բերելով մի քանի օրինակներ:

Պարապմունք 3

Սկզբում աչքաչափով համեմատել ջրի չափը՝ որտեղ է քիչ, որտեղ շատ, կամ ավազի մանրաձավարի միջոցով համապատասխան օրինակներ բերել: Հետո համեմատել քանակը՝ լցված տարբեր տարրաների մեջ:

Դիտել ավազի օրինակը բաժակի և ափսեի մեջ: Ինչպես իմանալ՝ որտե՞ղ է շատ: Զարգացնել երեխաների մտածողությունը, ինքնուրույն տարբերակներ առաջարկելու կարողությունը: Երեխաներին բացատրել, որ ավազի չափը միավորների և սանդղակի մասին: Կիրառեք համադրման եղանակը:

Պարապմունք 4

Այս պարապմունքն դաստիարակն առաջարկում է իրավիճակներ, որտեղ հնարավոր է համեմատել առարկաների խմբաքանակները: Սկզբում առաջարկվում են առարկաների հավասար խմբեր՝ նույնաչափ գդալներ, գազարներ, խաղալիքներ: Առաջին իրավիճակը ամենապարզն է: Աչքաչափով երևում է, թե դրանցից որ խումբն է շատ: Դրա համար կիրառվում է 5-6 առարկա: Ավելի դժվար խնդիր է, երբ պետք է համեմատել երկու խումբ, որտեղ 9-10 հավասարաչափ առարկաներ կան: Գոյություն ունի եղանակ, երբ կարելի է համեմատել քանակը առանց հաշվելու: Դա փոխմիանման հարաբերությունների եղանակն է: Երեխաներին բացատրեք հաշվելու կանոնների կարևորության պահպանումը: Այսպիսի կարգ կարելի է հաստատել, եթե առարկաները դասավորված են մեկ շարքով: Այդ դեպքում աչքերը պետք է շարժել ձախից աջ՝ համրելով առարկաները: Եթե նրանք դասավորված են խառը, անհրաժեշտ է վերադասավորել: Եթե առարկաները չի կարելի շարժել կամ աշխատել դրանց պատկերների միջոցով, անհրաժեշտ է համրել այն ձախից աջ և վերևից ներքև կամ հակառակը: Նպատակահարմար է կիրառել ձախից աջ մոդելը, որն ընտրված է տեքստը կարդալու նմանությամբ, քանի որ մենք կարդում ենք գրված տառերի ուղղությամբ՝ ձախից-աջ, վերևից ներքև:

Պարապմունքի ավարտին առաջարկել կատարել ուղիղ և հակադարձ համրանք:

Պարապմունք 5

«Որքան՞ վ է շատ կամ քիչ»:

Այս հարցին տրամադրվում է առանձին պարապմունք, որը հնարավորություն կտա առաջին տասնյակը սահուն համրել, նաև՝ ծանոթանալ <<ավելորդ>>, <<պակաս>> հասկացություններին, նրանց փոխլրացումներին: Այս փուլում երեխաների առջև խնդիր չի դրվում մտքում կատարել հանման գործողության երկու քանակների միջև: Նրանք տեսնում են այն ցուցադրմամբ:

Պարապմունք 6

«Չափում»

Այժմ կարելի է բացատրել չափման գործողությունը:

Չափումն առաջին հերթին հնարավորություն է տալիս պատասխանել «որքան» հարցին:

Ծրագրում համրելը և չափելը դիտվում են որպես երկու տարբեր թեմաներ, որոնք թույլ են տալիս թվի միջոցով արտահայտել քանակ: Երբ խոսքը գնում է անընդհատական չափման մասին՝ ջրի ավազի, ձավարեղենի կտորեղենի, այն կարելի է արտահայտել միայն թվի միջոցով, այսինքն՝ չափման եղանակով: Չափումն ունի իր հատուկ պլգորիթմը խնդրի լուծման եղանակը: Կիրառվում է աստիճանաբար սանդղակ, որտեղ կան չափման միավորներ, որոնք ապահովում են չափված քանակի հարաբերությունը: Եթե դա չափ ունեցող բաժակ է, ուրեմն բանակը տեղավորվում է նրա մեջ, եթե կտորեղեն է. մետրը համաձայնեցվում է կտորի եզրին, եթե կարտոֆիլ է կշռվում է:

Այժմ երեխաներին ծանոթացնենք քանոնի օգնությամբ երկրության չափումը: Չափենք մատիտի, ամրակի, թղթի երկարությունը: Համեմատենք առարկաների երկարությունը: Երեխաներին բացատրել «սանտիմետր» հասկացությունը: Ցույց տալ, թե ինչպես կարելի է գծել երկարություն կամ չափել արդեն գծված երկարությունը:

Պարապմունք 7

«Երկարության չափման միավորներ»

Երեխաներին ծանոթացնել «մետր» հասկացողությանը՝ որպես երկարության չափման միավոր: Սովորեցնել, որ մեկ մետրը 100 սմ է: Փայտյա մետրի միջոցով չափել սեղանի, աթոռի բարձրությունը, տիկնիկի հասակը: Երեխաներին ծանոթացնել ձկուն սանտիմետրին: Ցույց տալ որ սանտիմետրի միջոցով կարելի է չափել նաև առարկայի կորությունն այնպես,ինչպես գլխի,մեջքի,ծառի շրջագիծը:Ցուցադրել ևս մեկ չափիչ գործիք՝ չափերիզ:

Սովորեցնել համրել երկրորդ տասնյակի սահմանում:

Պարապմունք 8

Քննարկել «արագության» հասկացությունը: Արդեն խոսվել է, թե ինչը կամ ով է արագ շարժվում և ինչը կամ ով՝ դանդաղ:

Հարցեր տալ երեխաներին:

1. Ինքնաթիռով շուտ կհասնեն Մոսկվա, թե՞ մեքենայով:
2. Ասեք ամենաբարձր թռչող թռչունի անունը:
3. Ձեր խմբում ո՞վ է ամենարագ վազող երեխան:

Պարապմունք 9

Խնդիրային իրավիճակ. «համրել,թե՞ չափել»:

Ի տարբերություն մանկապարտեզի, որտեղ խնձորները սովորաբար համրում են, շուկայում կշռում են: Շատ կարևոր խնդիր է որոշել՝ ձեռնտու է գնել կշռա՞ծ թե փնջով բողկը: Պարզ է որ անիմաստ է լուծել այն ավանդական խնդիրը, երբ երեխաների առջև

դնում էին 5 փոքր խնձոր և 3 մեծ՝ պարտադրելով որոշել, թե որն է ավելի շատ: Այս խնդիրը միանշանակ ճիշտ պատասխան չունի: Իսկապես, համրենք խնձորները: Մենք ստացանք 5 փոքր և երեք մեծ խնձոր: Երեխաները եզրակացնում են, որ Փոքրը ավելի շատ է, քան մեծը: Այժմ չափենք և համոզվենք, որ փոքրերը կշռում են մեկ կիլոգրամ, իսկ մեծերը՝ երկու: Հետևաբար, մեծերը քանակով քիչ են, բայց քաշով է շատ և հակառակը, փոքր խնձորները քանակով շատ են, կշռով քիչ:

Երեխաների հետ կատարել նմանատիպ փորձեր:

Պարապմունք 10

Երեխաների մոտ ճշտել այն պատկերացումը, որ թիվը կախված չէ առարկաների մեծությունից:

«Ճանապարհորդություն դեպի երկրաչափական աշխարհ»

Նպատակը. Զարգացնել երեխայի մտածողությունը, վերլուծելու, ենթադրություններ անելու կարողությունը:

Առաջդրանք 1

Նյութը. Խաղատախտակ՝ պատմելու ընթացքում զանազան առարկաներ դասավորելու համար:

Դաստիարակ.

- Այսօր մենք կարկինի և մատիտի հետ ճանապարհորդություն ենք կատարելու դեպի երկրաչափական աշխարհ: Սակայն ճանապարհորդությունից առաջ եկեք մարզենք մեր ուշադրությունը՝ հնարավորինս շատ բան հիշելու համար:

Դաստիարակը ցույց է տալիս սխեմատիկ նկարներով որևէ քարտ, և երեխաները հիշելով պետք է նկարեն կամ կառուցեն այն (քարտի ցուցադրումը տևում է 2-3 վարկյան, 1 րոպեում 8 քարտ):

Եռանկյուն, արև, ձյունիկ, տառ ալիք, ծաղիկ և այլն:

Առաջդրանք 2

Պատկերների համեմատում:

Ինչո՞վ են իրարից տարբեր: Ցույց տալ նմանատիպ, սակայն չափսերով տարբեր երկու առարկա (կարելի է նկարել գրատախտակին): Դաստիարակը կարող է ներկայացնել ցանկացած առարկա փոխելով նախշազարդումը կամ երկրաչափական ձևը:

Նկարագրելով առարկաների տարբերությունը կամ նմանությունը՝ երեխան ինքնուրույն զարգացնում է իր կապակցված խոսքը:

Օրինակ՝ ձկան պոչի զարդանախշը նկարագրելու համար գեղեցիկ բառ կա՝ ալիքաձև, կորաձև: Անհրաժեշտ է հանձնարարել երեխային մտապահել այդ բառերը և հետագայում խոսքի մեջ օգտագործել:

Եզրակացություն

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ երեխային խաղային եղանակով ներարկում են գիտելիքներ մաթեմատիկայի բնագավառում, նա սովորում է կատարել տարբեր գործողություններ, մտավոր գործողություններ, զարգացնում է հիշողությունը, ուշադրությունը, մտածողությունը ստեղծագործական և ճանաչողական կարողությունները: Իսկ ուսուցման խնդրահարույց բնույթը նպաստում է ճկունության, մտածողության փոփոխականության զարգացմանը, ձևավորում է երեխայի ակտիվ ստեղծագործական դիրքը: Տարրական մաթեմատիկական հասկացությունների ձևավորման գործընթացն իրականացվում է դաստիարակի ղեկավարությամբ խմբասենյակում և դրանցից դուրս համակարգված աշխատանքի արդյունքում՝ ուղղված տարբեր միջոցների կիրառմամբ երեխաներին քանակական, տարածական և ժամանակային հարաբերություններին ծանոթացնելու: Դիդակտիկ միջոցները դաստիարակի մի տեսակ գործիքներ են երեխաների ճանաչողական գործունեության համար:

Ներկայում նախադպրոցական հաստատությունների պրակտիկայում տարածված են տարրական մաթեմատիկական ներկայացումների ձևավորման հետևյալ միջոցները՝

- Պարապումներին համար տեսողական դիդակտիկ նյութերի հավաքածուներ:
- Սարքավորումներ երեխաների համար անկախ խաղերի և գործունեության համար:
- Մանկապարտեզի դաստիարակի համար մեթոդական միջոցներ, որոնցում բացահայտվում է յուրաքանչյուր տարիքային խմբի երեխաների տարրական մաթեմատիկական հասկացությունների ձևավորման աշխատանքի էությունը և տրվում են մոտավոր դասախոսությունների նշումներ.
- Դիդակտիկ խաղերի և վարժությունների թիվ նախադպրոցական տարիքի երեխաներին քանակական, տարածական և ժամանակային ներկայացումների ձևավորման համար:

- Ուսումնական և ճանաչողական գրքեր երեխաներին դպրոցում, ընտանեկան միջավայրում մաթեմատիկայի յուրացմանը նախապատրաստելու համար:

Տարրական մաթեմատիկական պատկերացումներ կազմելիս ուսումնական միջոցները կատարում են տարբեր գործառույթներ.

- ✓ Իրականացնել տեսանելիության սկզբունքը:
- ✓ Հարմարեցնել վերացական մաթեմատիկական հասկացությունները երեխաների համար մատչելի ձևով:
- ✓ Օգնել նախադպրոցականներին տիրապետել տարրական մաթեմատիկական հասկացությունների առաջացման համար անհրաժեշտ գործողության մեթոդներին:

Դրանք նպաստում են երեխաներին մոտ հատկությունների, հարաբերությունների կապերի և կախվածությունների զգայական ընկալման փորձի կուտակմանը, դրա մշտական ընդլայնմանը և հարստացմանը, օգնում են աստիճանական անցում կատարել նյութից նյութականին, կոնկրետից և վերացականից:

Նրանք դաստիարակին հնարավորություն են տալիս կազմակերպել նախադպրոցական տարիքի երեխաների կրթական ճանաչողական գործունեությունը և ղեկավարել այդ աշխատանքը, զարգացնել նրանց է նոր գիտելիքներ ձեռք բերելու ցանկությունը տիրապետել հաշվմանը, չափմանը հաշվվարկի ամենապարզ մեթոդներին և այլն: Ընդլայնել դաստիարակի կարողությունները կրթական և զարգացման խնդիրների լուծման գործում:

Այսիպիսով ուսումնական միջոցները կատարում են կարևոր գործառույթներ, դաստիարակի և երեխաների գործունեության մեջ՝ նրանց տարրական մաթեմատիկական հասկացությունների ձևավորումը:

Գրականության ցանկ

1. Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները ավագ խմբում ուսումնամեթոդական ձեռնարկ, Ս. Չիբուխյան
Հ. Հարությունյան
2. Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Հ. Միտոյան Լ. Սարգսյան
3. Մանկապարտեզի ավագ տարիքի կրթական համալիր ծրագիր
4. Համացանց